

## ՓՈԽՆԸՄԲՈՒՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Ջինիշյան հիշատակի հիմնադրամի և Գորիսի պետական համալսարանի միջև

ք. Գորիս

“ 25 ”, “ 12 ” 2018թ.

### I. ՀՈՒՇԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Սույն Փոխըմբռնման հուշագիրը (ՓՀ)՝ վավերացված Ջինիշյան հիշատակի հիմնադրամի (ՋՀՀ) և Գորիսի պետական համալսարանի (ԳՊՀ) կողմից (այսուհետ՝ Կողմեր), կոչված է շարունակելու երկկողմ փոխըմբռնումը «Քաղաքացիական երկխոսություն և գործնական քայլեր փոփոխության համար 2018-2019թթ.» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման շրջանակներում, որի նպատակը ԳՊՀ-ի ուսանողների հասարակական ակտիվության ու իրազեկվածության բարձրացումն է:

ՓՀ-ն հանդիսանում է երկկողմ համագործակցության պատրաստակամության հայտարարում: Այս համագործակցության շրջանակներում չի նախատեսվում կողմերի միջև ֆինանսական հարաբերությունների և պարտավորությունների առաջացում:

### II. ՀՈՒՇԱԳՐԻ ԳՈՐԾԱԴՐՈՒՄԸ

Սույն ՓՀ-ն գործադրման մեջ է մտնում վավերացման պահից և գործում է Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում: Ծրագիրը մեկնարկում է Ուսանողական ծրագրային թիմի (ՈԻԾԹ) ընտրությամբ կամ նորացմամբ: ՈԻԾԹ-ն բաղկացած է 5-7 ուսանողներից, որոնք ընտրվում են ծրագրում նախորդ տարիներին մասնակցած ուսանողների կողմից: ՈԻԾԹ-ն ակտիվորեն մասնակցում է ծրագրի իրականացման ամբողջ ընթացքին՝ Ծրագրով նախատեսված ամենօրյա ծրագրային և նախապատրաստական աշխատանքներին: Ծրագրի համակարգումը և ֆինանսավորումը ամբողջությամբ իրականացվում է ՋՀՀ-ի կողմից, իսկ ԳՊՀ-ն իր աջակցությամբ նպաստում է Ծրագրի կազմակերպմանը և արդյունավետ իրականացմանն ուղղված աշխատանքներին:

### III. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՍՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՍԿՋԲՈՒՆՔՆԵՐԸ

#### 1. Սոտեցումները

ՋՀՀ-ն և ԳՊՀ-ն ընդունում են, որ ունեն նույն մոտեցումները՝ արձագանքելու Հայաստանում քաղաքացիական հասարակության կայուն զարգացմանը և դրանց խոչընդոտող պատճառների վերացմանը, որն արտացոլված է նաև Ծրագրում: Կողմերը պատրաստ են գործադրել իրենց բոլոր ջանքերը՝ ի նպաստ այնպիսի փոխհարաբերությունների, որոնք մարմնավորված են համագործակցության հետևյալ կարգախոսներում՝ անաչառություն, թափանցիկություն, կայունություն և շարունակականություն, երիտասարդության մասնակցություն, քաղաքացիական հասարակության հզորացում և մասնակից բոլոր կողմերի ունակությունների զարգացում: Կողմերը պատրաստ են համագործակցելու՝ ի նպաստ քաղաքացիական հասարակության զարգացման՝ օգտագործելով սեփական ներուժը և հնարավորությունները:

#### 2. Հիմնական սկզբունքները

ՋՀՀ-ն և ԳՊՀ-ն Օրագրի իրականացման ամբողջ ընթացքում կհետևեն հետևյալ հիմնական սկզբունքներին՝

- 2.1 կողմերից յուրաքանչյուրի աջակցություն-խնդրանքին (մասնավորապես հրատապ արձագանք պահանջող իրավիճակներում) արձագանքել անկեղծորեն, խոհեմորեն և հնարավորինս արագ,
- 2.2 ծրագրի իրականացմանը ազդող և Կողմերի վերահսկողությունից դուրս իրավիճակներում որոնել եռակողմ ընդունելի և ճկուն լուծումներ,
- 2.3 ակտիվորեն ուղիներ փնտրել՝ ամրապնդելու երկկողմ վստահությունը՝ կիսելով Օրագրի հետ կապված ողջ տեղեկատվությունը և առաջացած կամ կանխատեսվող խնդիրները,
- 2.4 ընդունել և բարյացակամ վերաբերվել համագործակցող բոլոր այն կողմերին, որոնց Օրագրի շրջանակներից դուրս հաշվետու է Կողմերից որևիցե մեկը,
- 2.5 պարբերաբար համատեղ վերանայել սույն ՓՀ-ն և շարունակաբար փնտրել կողմերի համագործակցության հզորացման ուղիներ,
- 2.6 եթե Կողմերից մեկը վստահ է, որ մյուս Կողմը գործում է սույն ՓՀ-ին անհամապատասխան, ապա այդ հանգամանքը պետք է Կողմերի միջև քննարկման առիթ և առարկա հանդիսանա,
- 2.8 կողմերը գիտակցում են, որ Օրագիրը չունի և ապագայում նույնպես չպետք է ունենա քաղաքական ուղղվածություն, հետապնդի քաղաքական նպատակներ և/կամ միտում՝ աջակցելու այս կամ այն կուսակցությանը կամ շարժմանը:

#### IV. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՂ ԿՈՂՄԵՐԻ ԴԵՐԸ ԵՎ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ

ՋՀՀ-ն և ԳՊՀ-ն Օրագրի իրականացման ամբողջ ընթացքում հետևում են սույն ՓՀ-ով ստանձնած իրենց դերին:

##### 1. Գորիսի պետական համալսարանը

- 1.1 ԳՊՀ-ն ընդունում է Օրագիրը և խրախուսում է համալսարանի ուսանողների մասնակցությունը Օրագրին:
- 1.2 Չի խոչընդոտում համալսարանում Օրագրին առնչվող տեղեկատվական պաստառների փակցմանը և տեղեկատվության ազատ տարածմանը:
- 1.3 Տրամադրում է 15-20 հոգանոց լսարան՝ կահավորված սեղաններով և աթոռներով՝ ըստ անհրաժեշտության:

##### 2. Զինիշյան հիշատակի հիմնադրամը

- 2.1 ՋՀՀ-ն ստանձնում է ամբողջ Օրագրի իրականացման համակարգումը:
- 2.2 Ապահովում է մեկ ուսուցանողով՝ ծրագրային պաշտոնյայով:
- 2.3 Ապահովում է ծրագրի իրականացման ֆինանսավորումը:

2.4 Ծրագրի սահմաններում անհրաժեշտության դեպքում հրավիրում է որակավորված մասնագետներին:

2.5 Ծրագրի շրջանակներում աջակցում է ուսանողական նախաձեռնություններին և գործնական քայլերին:

#### V. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Երկկողմ հաղորդակցությունը կիրականացվի ցանկացած մակարդակում և կկրի պարբերական բնույթ: Պաշտոնական և ոչ պաշտոնական հաղորդակցությունը Կողմերի աշխատակիցների միջև խրախուսվում է և պետք է դառնա Ծրագրի հաջողության գրավականը: Հաղորդակցման բոլոր ձևերը պետք է լինեն թափանցիկ և անկեղծ:

#### VI. ԿՈՆՖԼԻԿՏԵՐԻ ԼՈՒՏՈՒՄ

Կողմերը այս ՓՀ-ի շրջանակներում գործում են երկկողմ վստահության մթնոլորտում և գիտակցում են, որ չնախատեսված բոլոր խնդիրները և հարցերը պետք է լուծվեն փոխհամաձայնությամբ: Կոնֆլիկտային յուրաքանչյուր իրավիճակ պետք է լուծվի խաղաղ և ընկերական մթնոլորտում: Մեծ ջանքեր կներդրվեն՝ առաջացած խնդիրները երկխոսությունների և բանակցությունների միջոցով հարթելու և համաձայնեցնելու յուրաքանչյուր կողմի քաղաքականության և նպատակների հետ: Եթե կողմերը չեն կարողանում լուծել իրենց տարաձայնությունները բանակցությունների միջոցով, ապա մինչև ՀՀ օրենքով նախատեսված օրենսդրական քայլերի դիմելը՝ կողմերը պետք է խորհրդակցեն համատեղ համաձայնեցված երրորդ՝ անկախ միջնորդ կողմի՝ խորհրդատուի հետ:

#### VII. ՀՈՒՇԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն հուշագրում փոփոխություններ և բարեփոխումներ կարող են կատարվել կողմերից յուրաքանչյուրի խնդրանքով երկխոսությունների և քննարկումների միջոցով: Փոփոխությունները պետք է գրավոր արձանագրված լինեն:

#### VIII. ՀՈՒՇԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԶԱՏՎԱԾԸ

Այս ՓՀ-ն ուժի մեջ կմտնի ստորագրման պահից և կգործի 12 ամիս ժամկետով, որը Ծրագրի ամբողջ իրականացման ժամանակահատվածն է:

#### IX. ՀՈՒՇԱԳՐԻ ԽՁՈՒՄԸ

Կողմերից յուրաքանչյուրը կարող է խզել սույն ՓՀ-ն միայն մյուս կողմին նվազագույնը 1 (մեկ) ամիս առաջ գրավոր տեղեկացնելուց հետո:

#### VIII. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

«Ջինիշյան» հիշատակի հիմնադրամ

Գորիսի պետական համալսարան

Հասցե.

Հասցե.

Արուսյան փ. 34-5

Ավանգարդի փող., 2 շենք

ք.Երևան 0009, Հայաստան

ք. Գորիս 3204, Հայաստան

Գործադիր տնօրեն

ԳՊՀ ղեկավար

Արմեն Հակոբյան

Արտուշ Լուկասյան

Ամսաթիվ

Ամսաթիվ



Handwritten signature and date: 25.12.2018

Handwritten signature and date: 25.12.2018թ.